Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-1289-23.03.2026-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 343-րդ հոդվածի 7-րդ մասում «ստորաբաժանման ղեկավարին» բառերից հետո լրացնել «, բացառությամբ Օրենսգրքի 349.1-ին հոդվածի 3.1.-ին մասով սահմանված դեպքերի» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասում «եւ հարկային մարմին ներկայացված տեղեկությունների» բառերը փոխարինել «կամ տեղեկությունների, ինչպես նաեւ հարկային մարմնին հայտնի դարձած այլ տեղեկությունների» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 349.1-ին հոդվածում՝

1) 2-րդ մասից հանել «հաստատապես հայտնի» բառերը,

2) 3-րդ մասում՝

ա. «մեկ» բառը փոխարինել «երեք» բառով,

բ. ուժը կորցրած ճանաչել «դ» ենթակետը,

գ. լրացնել նոր «ե» ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ե. սույն հոդվածի 3.2-րդ մասով սահմանված դեպքում՝ հարկային մարմնի իրականացրած կամերալ (ներքին) ուսումնասիրության՝ հարկվող գործարքների վերաբերյալ արդյունքներով Օրենսգրքով հարկային պարտավորությունների առաջադրման համար սահմանված վաղեմության ժամկետը լրանալու տարին:»:

3) լրացնել նոր 3.1-ին և 3.2-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. Յուրաքանչյուր հարկային տարվա ընթացքում 2-րդ կամ 3-րդ անգամ թեմատիկ ուսումնասիրություն իրականացվում է բացառապես հարկային մարմնի ղեկավարի տված հանձնարարագրի հիման վրա:

3.2. Յուրաքանչյուր հարկային տարվա ընթացքում 3-րդ անգամ թեմատիկ ուսումնասիրություն իրականացվում է, եթե տվյալ հարկային տարում լրանում է հարկային մարմնի իրականացրած կամերալ (ներքին) ուսումնասիրության՝ հարկվող գործարքների վերաբերյալ արդյունքներով Օրենսգրքով հարկային պարտավորությունների առաջադրման համար սահմանված վաղեմության ժամկետը»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Լրամշակված նախագիծ

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

Կ-1289-23.03.2026-ՏՀ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 343-րդ հոդվածի 7-րդ մասում «ստորաբաժանման ղեկավարի» բառերից հետո լրացնել «, բացառությամբ Օրենսգրքի 349.1-ին հոդվածի 3.1.-ին մասով սահմանված դեպքերի» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասում «եւ հարկային մարմին ներկայացված տեղեկությունների» բառերը փոխարինել «կամ տեղեկությունների, ինչպես նաեւ հարկային մարմնին հայտնի դարձած այլ տեղեկությունների» բառերով:

Հոդված ~~2~~3. Օրենսգրքի 349.1-ին հոդվածում՝

1) 2-րդ մասից հանել «հաստատապես հայտնի» բառերը,

2) 3-րդ մասում՝

ա. ~~հանել «, որը կարող է հրապարակվել ոչ ավելի, քան յուրաքանչյուր հարկային տարվա ընթացքում մեկ անգամ» բառերը~~ «մեկ» բառը փոխարինել «երեք» բառով,

բ. ուժը կորցրած ճանաչել «դ» ենթակետը~~։~~.

գ. լրացնել նոր «ե» ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ե. սույն հոդվածի 3.2-րդ մասով սահմանված դեպքում՝ հարկային մարմնի իրականացրած կամերալ (ներքին) ուսումնասիրության՝ հարկվող գործարքների վերաբերյալ արդյունքներով Օրենսգրքով հարկային պարտավորությունների առաջադրման համար սահմանված վաղեմության ժամկետը լրանալու տարին:»:

3) լրացնել նոր 3.1-ին և 3.2-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. Յուրաքանչյուր հարկային տարվա ընթացքում 2-րդ կամ 3-րդ անգամ թեմատիկ ուսումնասիրություն իրականացվում է բացառապես հարկային մարմնի ղեկավարի տված հանձնարարագրի հիման վրա:

3.2. Յուրաքանչյուր հարկային տարվա ընթացքում 3-րդ անգամ թեմատիկ ուսումնասիրություն իրականացվում է, եթե տվյալ հարկային տարում լրանում է հարկային մարմնի իրականացրած

կամերալ (ներքին) ուսումնասիրության՝ հարկվող գործարքների վերաբերյալ արդյունքներով Օրենսգրքով հարկային պարտավորությունների առաջադրման համար սահմանված վաղեմության ժամկետը»:

Հոդված 34. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ՓԱՍՏԱԹՂԹԻ ԿՈԴ՝ Կ-1289-23.03.2026-ՏՀ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ՓԱՍՏԱԹՂԹԻ ԿՈԴ՝ Կ-1289[1]-23.03.2026-ՏՀ-011/1) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ՓԱՍՏԱԹՂԹԻ ԿՈԴ՝ Կ-1289[2]-23.03.2026-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Բաբկեն Թունյան	**«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	Հաշվի առնելով, որ Նախագծով նախատեսվում է ՀՀ հարկային օրենսգրքի 349.1-ին հոդվածում լրացնել 3.1-ին մաս, որի համաձայն յուրաքանչյուր հարկային տարվա ընթացքում 2-րդ կամ 3-րդ անգամ թեմատիկ ուսումնասիրություն իրականացվում է բացառապես հարկային մարմնի ղեկավարի տված հանձնարարագրի հիման վրա, ուստի առաջարկվում է բացառություն նախատեսել նաև ՀՀ հարկային օրենսգրքի 343-րդ հոդվածի 7-րդ մասում:	**Ընդունվել է:** ՀՀ հարկային օրենսգրքի 343-րդ հոդվածի 7-րդ մասում «ստորաբաժանման ղեկավարին» բառերից հետո լրացվել են «, բացառությամբ Օրենսգրքի 349.1-ին հոդվածի 3.1.-ին մասով սահմանված դեպքերի» բառերը: Նշված լրացումը նախատեսվել է Նախագծի 1-ին հոդվածով:	**Ընդունվել է:**
2.	ՀՀ ԱԺ պատգամավոր Բաբկեն Թունյան	**«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված (նոր համարակալմամբ՝ 2-րդ հոդված)**	Սույն ամփոփաթերթի 1-ին կետում նշված լրացմամբ պայմանավորված՝ առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասում կատարվող փոփոխությունները նախատեսել Նախագծի 2-րդ հոդվածով:	**Ընդունվել է:** ՀՀ հարկային օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասում կատարվող փոփոխությունները նախատեսող Նախագծի 1-ին հոդվածի համարակալումը խմբագրվել է:	**Ընդունվել է:**

3.	ՀՀ ԱԺ պատգամավոր Բաբկեն Թունյան	**«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված (նոր համարակալմամբ՝ 3-րդ հոդված)**	Թեմատիկ ուսումնասիրության արդյունքում պարտավորություններ առաջադրվելու դեպքում բացառված չէ նոր փաստական հանգամանքների, օպերատիվ տվյալների առաջացումը, որոնց դեպքում անհրաժեշտ լինի իրականացնել թեմատիկ ուսումնասիրություն: Սակայն ներկայումս գործող թեմատիկ ուսումնասիրության հանձնարարագրի՝ տարեկան մեկ անգամ հրապարակելու սահմանափակումը խոչընդոտում է հարկային հսկողության արդյունավետ իրականացմանը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքի 349.1-ին հոդվածի 3-րդ մասում հանել մեկ անգամ հանձնարարագիր հրապարակելու սահմանափակումը՝ նախատեսելով այն 3 անգամ: Միաժամանակ, առաջարկվում է նախատեսել, որ յուրաքանչյուր հարկային տարվա ընթացքում 2-րդ կամ 3-րդ անգամ թեմատիկ ուսումնասիրություն իրականացվում է բացառապես հարկային մարմնի ղեկավարի տված հանձնարարագրի հիման վրա, իսկ յուրաքանչյուր հարկային տարվա ընթացքում 3-րդ անգամ թեմատիկ ուսումնասիրություն իրականացվում է, եթե տվյալ հարկային տարում լրանում է հարկային մարմնի իրականացրած կամերալ (ներքին)	**Ընդունվել է:** Նախագծի՝ նոր համարակալմամբ 3-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետում «հանել «, որը կարող է հրապարակվել ոչ ավելի, քան յուրաքանչյուր հարկային տարվա ընթացքում մեկ անգամ» բառերը» փոխարինվել են ««մեկ» բառը փոխարինել «երեք» բառով» բառերով: Նույն մասում նախատեսվել է լրացնել «գ» կետ, որով ՀՀ հարկային օրենսգրքի 349.1-ին հոդվածի 3-րդ մասում լրացվել է նոր «ե» ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ. «ե. սույն հոդվածի 3.2-րդ մասով սահմանված դեպքում՝ հարկային մարմնի իրականացրած կամերալ (ներքին) ուսումնասիրության՝ հարկվող գործարքների վերաբերյալ արդյունքներով Օրենսգրքով հարկային պարտավորությունների առաջադրման համար սահմանված վաղեմության ժամկետը լրանալու տարին:»: Միաժամանակ, նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսվել է ՀՀ հարկային օրենսգրքի 349.1-ին հոդվածում լրացնել 3.1-ին և 3.2-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.	**Ընդունվել է:**

			ուսումնասիրության՝ հարկվող գործարքների վերաբերյալ արդյունքներով Օրենսգրքով հարկային պարտավորությունների առաջադրման համար սահմանված վաղեմության ժամկետը: Առաջարկվում է նաև նախատեսել, որ յուրաքանչյուր հարկային տարվա ընթացքում 3-րդ անգամ թեմատիկ ուսումնասիրություն իրականացվելու դեպքում թեմատիկ ուսումնասիրության հանձնարարագրում նշվում է հարկային մարմնի իրականացրած կամերալ (ներքին) ուսումնասիրության՝ հարկվող գործարքների վերաբերյալ արդյունքներով Օրենսգրքով հարկային պարտավորությունների առաջադրման համար սահմանված վաղեմության ժամկետը լրանալու տարին: Բացի այդ, հաշվի առնելով, որ Նախագծով նախատեսվում է ՀՀ հարկային օրենսգրքում կատարել նաև լրացումներ, ուստի առաջարկվում է Նախագծի վերնագիրը համապատասխանեցնել Նախագծի բովանդակությանը:	«3.1. Յուրաքանչյուր հարկային տարվա ընթացքում 2-րդ կամ 3-րդ անգամ թեմատիկ ուսումնասիրություն իրականացվում է բացառապես հարկային մարմնի ղեկավարի տված հանձնարարագրի հիման վրա: 3.2. Յուրաքանչյուր հարկային տարվա ընթացքում 3-րդ անգամ թեմատիկ ուսումնասիրություն իրականացվում է, եթե տվյալ հարկային տարում լրանում է հարկային մարմնի իրականացրած կամերալ (ներքին) ուսումնասիրության՝ հարկվող գործարքների վերաբերյալ արդյունքներով Օրենսգրքով հարկային պարտավորությունների առաջադրման համար սահմանված վաղեմության ժամկետը»: Նախագծում նոր հոդվածի լրացմամբ պայմանավորված՝ խմբագրվել է Նախագծի 2-րդ հոդվածի համարակալումը: Նախագծի վերնագրում «փոփոխություններ» բառից հետո լրացվել են «և լրացումներ» բառերը:	

4.	ՀՀ ԱԺ պատգամավոր Բաբկեն Թունյան	**«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված (նոր համարակալմամբ՝ 4-րդ հոդված)**	Նախագծում նոր հոդվածի լրացմամբ պայմանավորված՝ առաջարկվում է խմբագրել Նախագծի 3-րդ հոդվածի համարակալումը:	**Ընդունվել է :** Նախագծի 3-րդ հոդվածի համարակալումը խմբագրվել է:	**Ընդունվել է:**